Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1007[2]-28.10.2010-ՄԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (2001 թվականի հոկտեմբերի 23-ի, ՀՕ-247) 7-րդ հոդվածի 1-ին մասում «սահմանադրական դատարանի նախագահը.» բառերից հետո լրացնել «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հիմնարկինը՝ Մարդու իրավունքների պաշտպանը.» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
1. ՀՀ կառավարություն	1. Պատգամավորների կողմից բանավոր կարգով ներկայացված առաջարկությունների քննարկման արդյունքներով՝ առաջարկվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածում «կապակցությամբ կայացված որոշման» բառերը փոխարինել «քննարկման արդյունքների» բառերով: Նկատի է ունեցվում այն, որ քննարկման արդյունքներով միշտ չէ, որ որոշում է կայացվում:	Ընդունվել է	Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփխություններ:
	2. Պատգամավորների կողմից բանավոր կարգով ներկայացված առաջարկությունների քննարկման արդյունքներով՝ առաջարկվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասով կատարվող լրացման 2-րդ պարբերությունը հանել՝ նկատի ունենալով որ դեռևս համալիր կարգավորում չեն ստացել «համարժեք պաշտոն» հասկացության իրավական բնույթի հարցերը: Այդ առումով նշված խնդիրներին առաջարկվում է անդրադառնալ հետագայում:	Ընդունվել է	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը հանվել է:

2. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Ա. Մարտիրոսյան 26.11.2010 թ. թիվ ԺԽ-Ե-0745/10 գրություն	1. Հոդված 4-ի 4-րդ կետում «առնվազն մեկ» բառերից հետո «սահմանադրական» բառի փոխարեն գրել «օրենսդրությամբ նախատեսված» բառերը:	Չի ընդունվել	Մարդու իրավունքների պաշտպանի կողմից պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանված է ոչ թե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.1-րդ հոդվածով, որի համաձայն՝ Ազգային ժողովը մարդու իրավունքների պաշտպանին ընտրում է վեց տարի ժամկետով:
	2. Հոդված 5-ի 3-րդ կետում «մարզերից» բառից հետո ավելացնել «և պաշտպանի ներկայացմամբ առանձին պետական մարմիններում (գերատեսչություններում)» բառերը:	Առաջարկու-թյունը սկզբունքորեն ընդունելի է	Գտնում ենք, որ առանձին պետական մարմիններում մարդու իրավունքների պաշտպանի ստորաբաժանումների ստեղծմանը կարելի է անդրադառնալ միայն այդ ոլորտում առկա միջազգային փորձի ուսումնասիրությունից և համապատասխան կարգավորման մեխանիզմներ մշակելուց հետո: Այդ առումով խնդրի կարգավորմանն առաջարկում ենք անդրադառնալ հետագայում առանձին նախագծով: